

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՍՊԱՐՏԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ Զ. ՕՐՈՒԵԼԻ «1984» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ**

**Ժ. 02. 07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ. գ. թ. , դոցենտ Բ. Հ. Սողկյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

**բ. գ. դ., պրոֆեսոր Գ. Ռ. Գասպարյան
բ. գ. թ. , դոցենտ Ա. Վ. Խաչատրյան**

**Առաջատար
կազմակերպություն՝**

**Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մայիսի 30-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
Գիտական քարտուղար՝



բ. գ. դ. , պրոֆեսոր
Երզնկյան

Ե. Լ.

Մերօրյա աշխարհում կյանքի ընթացքի արագացմանը, հաղորդակցության և կապի ծավալների ու միջոցների ավելացմանը զուգընթաց միջազգային և միջպետական հարաբերությունները ձեռք են բերել ավելի բազմաշերտ բնույթ: Քաղաքականությունը՝ որպես վերոնշյալ փոխհարաբերությունների առկայացման ասպարեզ, դարձել է դժվար վերլուծելի մի հարթություն, որտեղ միմյանց են բախվում անհատների, ժողովուրդների, իշխանությունների, պետությունների և անգամ ողջ տարածաշրջանների հետաքրքրությունները, շահերն ու տեսլականները:

Այսօր երկրի իշխանությունը, որի նպատակը միշտ չէ, որ ժողովրդի համար բարենպաստ կյանքի ապահովումն է, պատրաստ է գործարկելու ցանկացած լծակ քաղաքական որոշումներում բացարձակ մենիշխանություն ձեռք բերելու համար: Իսկ քաղաքական գործընթացների արդարացիությունն ապահովելու լավագույն միջոցը, իհարկե, մտաշահարկում է՝ մանիպուլյացիան, որը դեռ ամենավաղ ժամանակներից եղել է քաղաքականության ոլորտի ամենատանցքային բնորոշումներից մեկը և այսօր էլ արժանի է բացահայտման և կանխարգելման:

Հանրության՝ լեզվի միջոցով իրականացվող քաղաքական մտաշահարկման և դրա կործանարար հետևանքներին լավագույնս անդրադարձել է անգլիացի գրող Ջորջ Օրուելը, ով, ապրելով մեծ ցավ իր իսկ ժամանակների բռնատիրական-մտաշահարկային կառավարությունների վարած քաղաքականության պատճառով և ունենալով մեծ անհանգստություն դրա հետևանքով ձևավորվող ապագա աշխարհի վերաբերյալ, իր մանրակրկիտ դիտարկումները մարմնավորել է իր՝ գրական ստեղծագործությունների հսկայածավալ ժառանգության մեջ: Օրուելի գրական գործերից յուրաքանչյուրը հակաբռնատիրական և հակամտաշահարկային մի մարգարեություն է, և քանի դեռ քաղաքական մտաշահարկումը շարունակում է մնալ մարդկության ամենախտոր չարիքներից մեկը, Ջ. Օրուելի ստեղծագործությունները չեն կորցնի իրենց գաղափարական արդիականությունը:

Ինչպես հեղինակի յուրաքանչյուր գրական ստեղծագործություն, այնպես էլ դեռևս 1949 թվականին գրված «1984» վեպը, որի հակաբռնատիրական և «ազատարար» ուղերձն իր ժամանակների ամբողջատիրական իշխանությունների վարած քաղաքականության դեմ էր, չի կորցրել իր արդիականությունը նաև տարածամանակյա կտրվածքով: Ինչպես նշում է Փոլ Չիլթոնը իր՝ մեզ ուղղված անձնական հաղորդագրության մեջ, «Օրուելի ասածն այսօր ավելի արդիական է, քան երբևէ» (անձնական հաղորդագրություն, հունիսի 5, 2017թ., [researchgate.net](https://www.researchgate.net) հարթակում):

Որպես առանցքային նշանակության գրական ստեղծագործություն և մտաշահարկային քաղաքական խոսույթը քննադատող հզոր գործ՝ մերօրյա մտաշահարկային հասարակություններում ապրող մարդկանց համար վեպի՝ տարբեր լեզուներով հասանելի լինելը կարևոր է և պարտադիր: Այս պատճառով վեպի հայերեն տարբերակը, Աստղիկ Աթաբեկյանի՝ 2012

թվականին արված թարգմանությամբ, արժեքավոր և երկար սպասված ներդրում է համաշխարհային գրականության հայերեն թարգմանության հսկայաձավալ ժառանգությանը: Այն, սակայն, բնագրի հետ համեմատության պարագայում ի ցույց է դնում մտաշահարկային լեզվական կառույցների թարգմանության անհամարժեքության լուրջ դեպքեր, ինչի պատճառով առաջ են գալիս դրանց լեզվամտաշահարկային գործառույթի, և սրա արդյունքում նաև թարգմանվածքում վեպի հաղորդակցական նշանակության համարժեք առկայացման լուրջ խնդիրներ:

Այս հարցով պայմանավորված՝ սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվում են մտաշահարկային լեզվական կառույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները և թարգմանության մեջ դրանց համարժեք պահպանման խնդիրները, քանի որ քաղաքականության ոլորտում լեզվի միջոցով իրականացված մտաշահարկումը ենթադրում է լեզվական կառույցների այնպիսի կիրառություն, որն ուղղված է շահարկելու օբյեկտիվ իրականությունը՝ ստեղծելով գոյություն ունեցողին չհամապատասխանող, միանգամայն այլ, մտացածին իրականություն: Իսկ երկու լեզուների միջև առկա կառուցվածքային անհամապատասխանությունների պատճառով յուրաքանչյուր լեզվում գործաբանական իմաստը ստանում է տարբեր լեզվական արտահայտություն. մի լեզվում շարահյուսական կառույցի միջոցով արտահայտված ներիմաստը մեկ այլ լեզվում կարող է իր լավագույն համարժեքը գտնել բառային միավորի կամ ոճական հնարի կիրառությամբ: Այս միջլեզվական անհամապատասխանության պատճառով էլ մտաշահարկային լեզվական կառույցների համարժեք թարգմանության ապահովումն առանձնակիորեն կարևոր է:

Վերոնշյալ առանցքային հիմնադրույթներից ելնելով՝ աշխատանքում լեզվագործաբանական քննության են առնվում վեպում ներկայացվող այն երկու հիմնական մտաշահարկային լեզվական գործիքները՝ **«Երկմիտքը» (Doublethink)** և **«Նորխոսքը» (Newspeak)**, որոնց շնորհիվ էլ վեպը երևան է հանում և լեզվաբանական ճշգրտությամբ մեկնաբանում ժամանակակից քաղաքականության ոլորտում տեղի ունեցող ամենատարբեր շահադիտական երևույթները:

Նորխոսքը վեպում ներկայացված իշխող կոմունիստական կուսակցության կողմից անգլերենի լեզվական հենքի և օրինաչափությունների այլափոխման միջոցով ստացված քաղաքական լեզու էր, որի նպատակն էր պարզագույն լեզվական կառուցվածքի միջոցով ձևավորել այնպիսի մտածելակերպ և խոսույթ, որոնք կատարելապես կհամապատասխանեին կուսակցության շահադիտական գաղափարախոսությանը՝ բացառելով կուսակցության շահերին դեմ մտքերի կամ մտածողության հնարավոր դրսևորումը: Վեպում այն արտահայտված է առավելապես բառային միավորների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը, արտահայտելով մտաշահարկված իրականության մաս կազմող կոնկրետ քաղաքական երևույթ կամ գաղափար, վեպում ունի կարևոր հակամտաշահարկային հաղորդակցական նշանակություն:

Ատենախոսության մեջ թարգմանաբանորեն քննվում են նաև վեպում տեղ գտած հանրալեզվական կառույցների հայերեն թարգմանությունները: Թարգմանական համարժեքության ապահովումն, այս դեպքում, պարտադիր է այն պատճառով, որ այդ կերպ հեղինակը փորձում է հնարավորինս պատկերավոր նկարագրել համատարած հանրային մտաշահարկման արդյունքում առաջացող խարխուլ հասարակությունը:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից հասարակություններում իշխանությունների կողմից իրականացվող լեզվական մտաշահարկման բացահայտման և ճանաչման անհրաժեշտությամբ, ինչպես նաև միջազգային և միջմշակութային հարաբերությունների խորացման համատեքստում թարգմանության՝ որպես միջլեզվական հաղորդակցության միջոցի կարևորությամբ:

Աշխատանքի **նպատակն** է վերլուծել քաղաքական մտաշահարկման լեզվական արտահայտչամիջոցների գործաբանական առանձնահատկությունները և թարգմանության մեջ դրանց համարժեք պահպանման խնդրի քննությամբ առաջադրել այդ կառույցների համարժեք և պատշաճ փոխադրման համար կիրառելի թարգմանական մոտեցում և ռազմավարություն: Մտաշահարկային լեզվական կառույցները մարդկային մտքի և ճանաչողության շահարկումն իրականացնում են ոչ միայն իրենց արտահայտած գործաբանական իմաստներով, այլ այդ իմաստների արտահայտման լեզվական և կառուցվածքային առանձնահատկություններով: Հետևաբար, թարգմանության գործում վերոնշյալ կառույցների թե՛ իմաստը (բովանդակություն), և թե՛ լեզվական արտահայտությունը թարգմանչի թարգմանական ռազմավարության բաղկացուցիչներն են:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել քաղաքական մտաշահարկման լեզվական, հասարակական-մշակութային, մտային-հոգեբանական և այլ առանձնահատկությունները,
2. ուսումնասիրել թարգմանության համարժեքության գաղափարի շուրջ ձևավորված առկա տեսական դրույթները,
3. առաջադրել մտաշահարկային խոսույթի թարգմանական համարժեքության քննության մեթոդաբանական շրջանակ,
4. քննել մտաշահարկային լեզվական միջոցների առանձնահատկությունները անգլերենում,
5. համեմատականորեն վերլուծել բնագրում («1984» վեպում) առկա մտաշահարկային լեզվական կառույցները և դրանց հայերեն թարգմանությունները,
6. հայտնաբերված թարգմանական անհամարժեքությունների դեպքում առաջարկել թարգմանության այլ տարբերակներ,
7. կատարված վերլուծության հիման վրա որոշարկել մտաշահարկային լեզվական կառույցների համարժեք թարգմանության ռազմավարության շրջանակ:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար սույն աշխատանքում կատարված հետազոտությունն անցկացվել է մի շարք **մեթոդների** համադիր կիրառությամբ: Կիրառվել են մասնավորապես.

- համակարգային վերլուծության վերլուծական և համադրական դիտարկման մեթոդները,
- լեզվագործաբանական վերլուծության մեթոդը,
- նկարագրական և զուգադրական վերլուծության մեթոդները,
- բառակազմական վերլուծության մեթոդը,
- լեզվաոճական վերլուծության մեթոդը,
- լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդը
- գրականագիտական վերլուծության մեթոդը:

Աշխատանքի **մեթոդաբանական հենքը** Բասնետի, Հաուզի, Փիմի, Յակոբսոնի, Նայդայի, Նյումարքի, Քեթֆորդի, Վինեյի ու Դարբերնեի, Քոլլերի, Բեյքերի, Էվեն-Ջոհարի, Թուրիի, Կոմիսարովի, Բարխուդարովի, Վինոգրադովի, Ֆյոդորովի, Շվեյցերի, Գասպարյանի, Գաբրիելյանի, Սողկյանի, Ջաքարյանի, Համբարձումյանի և մի շարք այլ տեսաբանների՝ թարգմանական համարժեքությանը՝ որպես թարգմանական գործունեության վերջնանպատակին, ինչպես նաև թարգմանության որակի դիտարկման գործում վերջինիս առանցքային կարևորությանը նվիրված աշխատություններում արծարծված դրույթներն են:

Աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվում է քաղաքական խոսույթում մտաշահարկային լեզվական կառույցների հայերեն թարգմանությունը, քննվում են թարգմանության գործընթացում կիրառվող կոնկրետ ռազմավարությունը և թարգմանական հնարների համակազմը: Թարգմանական հետազոտության արդյունքում աշխատանքում առաջադրվում է մտաշահարկային խոսույթի լեզվական միավորների համարժեք թարգմանությունն ապահովող նոր թարգմանական մոտեցում:

Աշխատանքի **լեռնական արժեքը** պայմանավորված է թարգմանության որակի գնահատմանը, ինչպես նաև թարգմանության գործընթացում համարժեքության պահպանմանը վերաբերող տեսական շրջանակների համեմատական վերլուծությամբ: Բացի այդ՝ թարգմանաբանությունը, որպես հարաբերականորեն նոր և դեռևս զարգացման ու իմաստավորման փուլում գտնվող գիտակարգ, կարիք ունի ինչպես գոյություն ունեցող տեսական դրույթների շարունակական համակարգման և փորձարկման, այնպես էլ նոր տեսական դրույթների առաջադրման: Այս խնդիրների լուծմանն էլ իր օժանդակությունն է բերում սույն աշխատանքը:

Աշխատանքի **գործնական արժեքն** այն է, որ մտաշահարկային լեզվական կառույցների թարգմանությունների վերլուծության արդյունքում մեր կողմից առաջարկված թարգմանական ռազմավարությունը հետագայում կարող է հիմք դառնալ ոչ միայն մտաշահարկային լեզվական միավորների, այլև գործաբանական առանձնահատուկ նշանակություն ունեցող ցանկացած լեզվական միավորի համարժեք և պատշաճ թարգմանության համար: Իսկ

վեպի հայերեն թարգմանվածքի՝ սույն աշխատանքում ներկայացված թարգմանական վերլուծությունը հետագայում կարող է հիմք դառնալ գրքի վերախմբագրման և բարելավված տարբերակի վերահրատարակման համար:

Վերլուծության **փաստական նյութը** Զ. Օրուելի «1984» վեպում առկա մտաշահարկային լեզվական կառույցների՝ նորխոսքի բառային միավորների, ինչպես նաև վեպում տեղ գտած հանրալեզվական կառույցների հայերեն թարգմանությունն է:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է մեր առջև դրված խնդիրներով և վերլուծության տրամաբանական ընթացքով. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության **ներածության** մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնախնդիրներն ու հիմնահարցերը: Սահմանվում են նաև հետազոտության թեմայի արդիականությունը, վերլուծության նպատակը, խնդիրները, տեսական և գործնական արժեքը, գիտական նորույթը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլխում**, որը վերնագրված է «Մտաշահարկման լեզվագործաբանական առանձնահատկությունները Զ. Օրուելի «1984» վեպում» և բաղկացած է երեք ենթագլխից, լեզուն ներկայացվում է որպես մտաշահարկման, հատկապես քաղաքական մտաշահարկման ամենահզոր և արդյունավետ գործիք: Այն դիտարկվում է որպես մարդկային ըմբռնողականության և աշխարհընկալման այնպիսի միջոց, որն ի զորու է կողմորելու, պարունակելու և հաղորդելու թե՛ օբյեկտիվ իրականությունն ու բացարձակ ճշմարտությունը, թե՛ շահադիտական և մտաշահարկային նպատակներով ձևակերպված կեղծիքը: Քանի որ լեզուն մարդկային հաղորդակցության, ինչպես նաև տեղեկատվության պահպանման և փոխանցման թերևս ամենահզոր համակարգն է, դրա միջոցով կարելի է այլափոխել ոչ միայն ներկա իրականությունը, այլ նաև խմբագրել անցյալը, ձևափոխել պատմությունը և «նորաստեղծ իրականությունը» հաղորդել մարդուն իբրև իրողություն: Եվ քանի որ լեզուն համարվում է մարդկային մտածողության բնատուր և ամենախորը կառույցը, մարդը մտածում և որպես իրողություն է ընդունում այն, ինչ իրեն հաղորդվում և փոխանցվում է լեզվի միջոցով: Նման լեզվական ներագրման արդյունքում էլ ձևավորվում է որոշակիորեն սահմանագծված աշխարհայացք և մտածելակերպ, որն էլ կանխորոշում է մարդու սոցիալական վարքագիծն ու գործունեությունը (Sapir and Whorf, Chomsky, Chilton, Foucault և այլք):

Լեզվական ներագրման այս մեխանիզմը բավականին խրթին երևույթ է և անցնում է առկայացման բավականին բարդ ուղի: Լեզուն, լինելով վերացական համակարգ, մարդու մտքի վրա ներագրում է հաղորդակցման մեջ իր կիրառական առկայացման, այսինքն՝ խոսքի միջոցով: Արդյունքում ձևավորվում է այնպիսի մի խոսույթ, որում կարող է առկայանալ և գործարկվել նպատակային մտաշահարկումը: Հետևապես կարելի է ասել, որ մտաշահարկումը (և հատկապես քաղաքական մտաշահարկումը)

լեզվագործաբանական երևույթ է, որի իրացման գործում իր լուրջ դերակատարումն ունի ինչպես լեզուն, այնպես էլ վերջինիս կիրառությունը պայմանավորող և կանխորոշող խոսույթային-գործաբանական միջավայրը:

Լեզվի կիրառության այս խոսույթային միջավայրի առավել մանրամասն նկարագիր է տրվում գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված «**խոսույթը որպես քաղաքական մտաշահարկման լեզվական տիրույթ**», որում խոսույթը ներկայացվում է որպես մտաշահարկման առկայացման լեզվական տիրույթ: Ենթագլխում վերլուծության են արժանանում վերջինիս ամենատարբեր հասարակական, մշակութային, վերացական-փիլիսոփայական, ինչպես նաև գործաբանական հայեցակերպերը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում վերջինիս հարաբերությանը հաղորդակցական ակտի մասնակիցների՝ խոսողի և լսողի հետ, որոնք, թերևս, վերջինիս ամենաառանցքային գործաբանական հարաչափերն են: Դիտարկվում են նաև խոսույթի առկայացման գրավոր, բանավոր, տեքստային, խոսքային, ինչպես նաև բազմակերպ (multimodal) մակարդակները:

Գլխի երկրորդ՝ «**Մտաշահարկման լեզվագործաբանական առանձնահատկությունները քաղաքական խոսույթում**» ենթագլխում մանրամասն անդրադարձ է արվում քաղաքական խոսույթին, որում քաղաքական գործիչները՝ մի կողմից, իսկ հանրությունը՝ մյուս կողմից, դիտարկվում են որպես հիմնական դերակատարներ՝, իսկ քաղաքական հաղորդակցության իրական նպատակ է սահմանվում ոչ թե իրադրության օբյեկտիվ նկարագրությունը, այլ հասցեատիրոջը համոզելը և նրան քաղաքական գործողությունների դրդելը²: Այս համատեքստում նախ ներկայացվում են քաղաքական խոսույթում առկա մի շարք մտաշահարկային ռազմավարություններ, օրինակ՝ դրական **ինքնաներկայացումը** (positive self-presentation) և **այլոց բացասական ներկայացումը** (negative other-presentation), «**մտաշահարկային նախատիպերը**», **հարկադրումը/պարտադրումը** (coercion), **օրինականացումն ու ապօրինականացումը** (legitimization and deligitimization), **ներկայացումն ու խեղաթյուրումը** (representation and misrepresentation), որից հետո արտարկվում են նաև դրանց իրագործման նպատակով օգտագործվող լեզվական միջոցներն ու կառույցները, որոնց շարքում առանձնացվում են, օրինակ՝ **խոսքային մակրոակտերը**, **բառապաշարի կանխորոշված ընտրությունը**, ամենատարբեր **շարահյուսական կառույցների**, **ոճական միջոցների և հնարների**, ինչպես նաև **ձայնային և տեսողական նշանային արտահայտչա-միջոցների** գործածությունը:

Գլխի երրորդ՝ «**երկմիտքը**» եվ «**նորխոսքը**» որպես քաղաքական մտաշահարկման լեզվական միջոցներ **Ջ. Օրուելի «1984» վեպում**

¹ van Dijk T. A. Discourse and Manipulation. // Discourse and Society, volume 17, issue 3, SAGE, 2006.

² Чудинов А. П. Дискурсивные характеристики политической коммуникации // Политическая лингвистика., Вып. 2 (40). - Москва, 2012.

ենթազվխում մանրագնին լեզվագործաբանական վերլուծության են ենթարկվում վեպում տեղ գտած մտաշահարկային լեզվական գործիքները՝ «**երկմիտքը**» և «**նորխոսքը**»: Ներկայացվում են նախ դրանց լեզվական առանձնահատկությունները՝ թե լեզվական ինչպիսի կառույցի և օրինակափոխությունների միջոցով են դրանք իրականացնում իրենց մտաշահարկային գործառույթը, ապա ուսումնասիրվում է այդ գործառույթի առկայացման ողջ մեխանիզմը՝ ներագդման մտային-հոգեբանական, արժեհամակարգային, ճանաչողական-ընկալողական հայեցակերպերը:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «**Համարժեքությունը որպես թարգմանական գործունեության վերջնանպատակ**», որի առաջին՝ «**Թարգմանական համարժեքության բազմահայեցակերպային վերլուծություն**» ենթազվխում ներկայացվում է թարգմանական համարժեքությանը թարգմանության տարբեր տեսությունների շրջանակներում գոյություն ունեցող մոտեցումները: Պայմանավորված թարգմանության՝ այլ գիտակարգերի և հասարակական կյանքի ամենատարբեր տիրույթների հետ ունեցած սերտ առնչության աստիճանական բացահայտմամբ՝ ժամանակի ընթացքում թարգմանության յուրաքանչյուր տեսության առանցք է դառնում դրա որևէ մի հայեցակերպը, որն էլ տվյալ տեսության շրջանակներում ձեռք է բերում առավելագույն կարևորություն և դառնում այն արժեքը կամ հայեցակերպը, որը պետք է ենթարկվի համարժեք միջլեզվական փոխադրման: Այս պատճառով «թարգմանաբանությունը մինչ այժմ մեր ուշադրությանն է ներկայացրել միայն հատվածական տեսությունների մի խառնուրդ, որոնցից յուրաքանչյուրը «թարգմանություն» կոչվող բազմաբարդ, բազմակերպ և ոչ ճշգրիտ երևույթին մոտենում է մեկ կամ մի քանի տեսանկյուններից միայն»³:

Արա հիման վրա ենթազվխում առաջադրվում է այն դրույթը, որ տեսական տարակարծությունների պատճառը ոչ այնքան թարգմանական համարժեքության կարևոր կամ անկարևոր լինելն է, որքան այն հանգամանքը, թե որ տեսության շրջանակներում թարգմանության որ հայեցակերպին կամ ներակա առանձնահատկությանն է վերագրվում առավելագույն արժեք: Հետևաբար, համարժեքությունից խուսափել չէր կարող և ոչ մի տեսություն կամ մոտեցում, որովհետև դրանցից ամեն մեկը, առաջնայնություն տալով թարգմանական որևէ բաղադրիչի, ինքնաբերաբար ձևավորում է որոշակի արժեք, որն անխուսափելիորեն պետք է փոխանցվի թիրախ լեզվամշակույթ:

Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ թարգմանությունն, անկախ ամեն ինչից, լեզվական կողերի միջև տեղի ունեցող փոխադրային երևույթ է, և որ թարգմանության՝ որպես լեզվական գործունեության գոյությունը, պայմանավորված է մեկ լեզվով արտահայտված տեքստը/խոսույթը այդ լեզուն չտիրապետող մարդկանց համար այլ լեզվով հասանելի դարձնելու տարրական պահանջով: Եվ եթե միտքն իր շոշափելի արտահայտումը գտնում

³ Chesterman A. Skopos Theory: A Retrospective Assessment. // Perspektiven auf Kommunikation. Festschrift für Liisa Tittula zum 60. Geburtstag., Berlin: SAXA Verlag, 2010.

է լեզվի միջոցով, ապա դրա միջլեզվական փոխադրումը (այն է՝ թարգմանությունը) չի կարող ուշադրություն չդարձնել լեզվի դերի և մտքի լեզվական արտահայտման հայեցակերպի կարևորության վրա:⁴ Այս առումով արդարացի է Ս. Գասպարյանի կարծիքն առ այն, որ իմաստի, գաղափարի, երևույթի, իրականության ընկալումը հենց «... լեզվի ընկալումն է, քանի որ մարդու մտածողությունն ու աշխարհայացքն էլ ձևավորվում և արտահայտվում են լեզվի միջոցով»:⁵

Հետևաբար, լեզվական միավորի արժեքի անքակտելի մաս են կազմում ոչ միայն դրա արտահայտած իմաստը՝ այսինքն, արտահայտման բովանդակային տիրույթը, այլ նաև այն լեզվական/ձևային կառույցը, որի միջոցով արտահայտվում է վերոնշյալ իմաստը: Իսկ քանի որ նմանատիպ լեզվական կառույցները ավելի մեծ լեզվական միավորի՝ տեքստի անմիջական բաղադրիչներն են, թարգմանության մեջ դրանց արժեքը ներառում է նաև տեքստի այնպիսի արտալեզվական առանձնահատկություններ, ինչպիսիք են աղբյուր լեզվամշակույթում նույն տեքստի ունեցած հաղորդակցական նշանակությունը, իրականացրած գործառույթը, հասցեագրված լսարանի հասարակական-մշակութային և լեզվական առանձնահատկությունները, և այլն:

Թարգմանական համարժեքության մեջ թարգմանության վերոնշյալ հայեցակերպերի կարևորության հիման վրա էլ գլխի երկրորդ՝ **«Թարգմանության որակի գնահատման մեթոդաբանական հենքը»** ենթագլխում փորձ է արվում ձևավորել լեզվագործաբանական մեծ արժեք ունեցող տեքստերի՝ այս դեպքում մտաշահարկային գործառույթ իրականացնող, լեզվագործաբանորեն առանձնահատուկ լեզվական կառույցների թարգմանության համար մեթոդաբանական հենք: Այստեղ թարգմանության որակի գնահատման հնգամակարդակ ստորակարգային մոտեցման շրջանակներում առանձնապես կարևորվում է թարգմանական այնպիսի հայեցակերպերի դիտարկումը, ինչպիսիք են **թարգմանական նորմերը, թարգմանական սխալները, թարգմանչի լեզվական վարքը, թարգմանական ռազմավարությունը, թարգմանվածքի տիպը** և այլն:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«Մտաշահարկման լեզվագործաբանական առանձնահատկությունների համարժեք պահպանման խնդիրը «1984»-ի հայերեն թարգմանվածքում»:**

Հենվելով լեզվաբանական դետերմինիզմի գաղափարի վրա՝ վեպում Օրուելը քաղաքական մտաշահարկումը հասցրել է իր ծայրագույն հոռետեսական բարձրակետին՝ լեզվական կողի միջոցով իրականության և մտքի աղճատմանը: Իր իսկ ստեղծած նորխոսքը, որն արժանացել է մեծածավալ քննության, ինչպես և քննադատության, անկրկնելի լեզվական

⁴ House J. Translation Quality Assessment. Past and Present, Routledge, Abingdon, 2015.

⁵ Գասպարյան Ս. Հերմենևտիկան որպես գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեթոդաբանություն // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» № 3 (18), 2015.

կառույց է, որը, թեև անհնարին և անհեթեթ է թվում անգլերենի բառակազմության տեսանկյունից, մեծ հետաքրքրություն և արժեք է ներկայացնում թարգմանական առումով:

Քանի որ Նորխոսքը հնարված գեղարվեստական-քաղաքական արհեստական լեզու (conlang) է՝ կազմված անգլերենի լեզվական կանոնների միտումնավոր այլափոխման միջոցով (ի տարբերություն այլ կոնլանգների, որոնք, որպես կանոն, չեն ստեղծվում արդեն իսկ գոյություն ունեցող որևէ լեզվի հենքի վրա և հետևաբար չեն կարող, որպես ինքնուրույն համակարգ, միջլեզվականորեն փոխադրվել), դրա թարգմանությունն, ըստ էության, ենթադրում է մի ողջ լեզվական կողի թարգմանություն և անհրաժեշտ է դարձնում վերջինիս վերստեղծումը և վերաձևավորումը թիրախ լեզվի համակարգի հենքի վրա՝ ենթադրելով թարգմանչական մեծ ստեղծագործականություն:

Այն, որպես ինքնուրույն լեզվահամակարգ, վեպում արտահայտված է բառային միավորների միջոցով, որոնց համարժեք վերարտադրությունը պարտադիր նախապայման է հատկապես այն պատճառով, որ դրանք իրենց մտաշահարկային գործառույթն իրականացնում են կազմության պարզագույն և այլափոխված լեզվաբանական սկզբունքների շնորհիվ: Հետևաբար, դրանց չպահպանումը կհանգեցնեք վերջիններիս ողջ գործաբանական-հաղորդակցական արժեքի կորստին:

Նորխոսքի թարգմանության որակի վերլուծության նպատակով նախ ձևավորել ենք վերհանված շուրջ 90 նորխոսքային բառային միավորից և դրանց թարգմանություններից բաղկացած բառային կորպուս, որն էլ եղել է մեր նկարագրական-զուգահրեհական վերլուծության հիմնական բազան: Բնագիր միավորները և դրանց թարգմանությունները համակարգվել են և ենթարկվել զուգահրեհման՝ որակական դիտարկման նպատակով:

Նորխոսքի բառային միավորների միջլեզվական փոխադրման բնույթը որոշելիս՝ հիմնվել ենք թարգմանական հնարների Վինեի ու Դարբլինեի դասակարգման վրա, որը մանրամասնորեն ներկայացված է աշխատանքի երկրորդ գլխում: Նորխոսքի բառային միավորների թարգմանությունների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ Վինեի և Դարբլինեի՝ թարգմանական հնարների շրջանակի կիրառմամբ նորխոսքի բառային միավորների հայերեն փոխադրման ժամանակ թարգմանիչն առավելապես դիմել է **պատճենման (calque)**, **բառացի թարգմանության՝ մի շարք դեպքերում նաև խոսքամասային փոխատեղման զուգակցմամբ (literal translation+transposition)**, **փոխառության (borrowing)** և **հարմարեցման (adaptation) թարգմանական հնարների կիրառությանը:**

Նորխոսքի բառերի մեծ մասի (շուրջ 65-70%) թարգմանության դեպքում դրանք **պատճենվել են** թիրախ լեզու, ինչի արդյունքում նույնությամբ պահպանվել են վերջիններիս բառակազմական կառույցները: Մտաշահարկային գործաբանական իմաստի համարժեք փոխադրման խնդրի վերաբերյալ կարող ենք ասել, որ նորխոսքի մի քանի բառային միավորների՝ պատճենման միջոցով ստացված թարգմանությունները համարժեք կերպով են

արտահայտում բնագրային նորխոսքի միավորների արտահայտած իմաստները: Այս դեպքում բնագրային նորխոսքի միավորների բառակազմական կառուցվածքներն, ըստ էության, այնպես են պատճենվել թիրախ լեզու, որ թիրախ տեքստի բառային միավորների անմիջական բաղադրիչների իմաստային պատճառաբանվածության շնորհիվ կարելի է անմիջապես հասկանալ բառի արտահայտած իմաստը:

Այսպես. **INGSOC** սեղմանունը, որը ստացվել է «**English Socialism**» բառակապակցության անդամ բառերի վերջնականների սղման (apocope) միջոցով, վեպում սոցիալիստական կուսակցության սերմանած բռնատիրական քաղաքական գաղափարախոսության կամ փիլիսոփայության նորխոսքային անվանումն է: Թարգմանվածքում բառը թարգմանվել է **ԱՆԳՍՈՑ**, որը **INGSOC** բառի տիպիկ կառուցվածքային պատճենն է՝ կրկին ստացված վերջնականի սղման միջոցով՝ «**Անգլիական սոցիալիզմ**» բառակապակցության բառերի վերջնականների սղման արդյունքում:

«Down at street level another poster, torn at one corner, flapped fitfully in the wind, alternately covering and uncovering the single word INGSOC.» (Orwell 2012: 4)⁶

«Ներքևը՝ մայթագրին, քամու տակ փողփողում էր անկյունը պոկած մի ցուցապաստառ՝ թաքցնելով ու բանալով իր միակ բառը՝ ԱՆԳՍՈՑ:» (Օրուել 2012: 4)⁷

Հանդիսանալով բնագրային բառային միավորի ուղղակի կառուցվածքային պատճենը՝ **ԱՆԳՍՈՑ** բառը համարժեքորեն արտահայտում է անգլերեն բնագրում բառի անվանած երևույթը:

Նորխոսքի մի շարք բառային միավորների՝ պատճենման միջոցով ստացված թարգմանությունները, սակայն, ի տարբերություն վերոնշյալ բառային միավորի թարգմանության, համարժեքորեն չեն արտահայտում բնագրի բառերի արտահայտած իմաստները: Որպես համընդհանուր դիտարկում կարելի է ասել, որ այս հանգամանքը պայմանավորված է աղբյուր և թիրախ լեզուների ամենատարբեր լեզվական՝ ձևաբանական, բառակազմական, հնչյունաբանական, քերականական առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող նկատելի տարբերություններով:

Նմանատիպ մի շարք բառերի թարգմանությունների վերլուծության արդյունքում, որը մանրամասն կերպով կդիտարկենք ստորև, փորձել ենք առաջադրել այդ բառերի թարգմանության մեր տարբերակները, որոնք, մեր կարծիքով, առավել համարժեք կերպով են արտահայտում բնագրի բառային միավորների արտահայտած իմաստները: Այսպես.

⁶ Orwell G. Nineteen Eighty-Four. London: Penguin Books, 2012.

⁷ Ջ. Օրուել, «1984», Աստղիկ Աթաբեկյան, Երևան, Անտարես, 2012.

«The ministry of Truth- Minitrue, in **Newspeak** - was startlingly different from any other object in sight.» (Orwell 2012: 6)

«Ճշմարտության նախարարությունը, **Նորալեզվով՝** Նախանշչրը, ապշեցուցիչ կերպով փարբերվում էր այն ամենից, որ իր շուրջն էր:» (Օրուել 2012: 5)

«**Newspeak**» բառը, որը վեպում հանդիպում է շուրջ 83 անգամ, սոցիալիստական կուսակցության կողմից ստեղծված մտաշահարկային լեզուն էր, որը նպատակ էր հետապնդում իր պարզագույն լեզվական կառույցի միջոցով մտաշահարկելու այդ լեզվով խոսողների մտածողությունն ու աշխարհընկալումը: Ձևաբանորեն այն ստացվել է «**new**» և «**speak**» հիմքերի բառաբարդման միջոցով, որի արդյունքում ստացվել է «**newspeak**» կցական գրությանը բարդ բառը:

Իսիստ հետաքրքրական է հեղինակի կողմից հենց «**speak**» արմատի կիրառության նախընտրությունը: Ենթադրաբար կարելի է ասել, որ եթե հեղինակի նպատակը լիներ նորխոսքի՝ որպես լեզվական կողի կամ կառույցի շեշտադրումը միայն, նա «**speak**» արմատի փոխարեն կարող էր կիրառել «**lang**» մասնիկը՝ ստացված **language** բառի վերջնամասնիկի սղման միջոցով, որի արդյունքում կստացվեր «**newlang**» բառը՝ ուղղակիորեն ցույց տալով նորխոսքը որպես լեզվահամակարգ: Արանից կարելի է եզրակացնել, որ կիրառելով «**speak**» բառը (որն առաջնայնորեն բայ է, սակայն այս դեպքում գործում է որպես գոյական՝ համաձայն նորխոսքի լեզվական կանոնների (էջ 346))՝ հեղինակը հղում է անում ոչ միայն նորխոսքի լեզվական կողին, այլ առավելապես վերջինիս գործածությանը խոսքում: Նրա հիմնական նպատակն է ի ցույց դնել նորխոսքի կիրառության ամենատարբեր խոսութային առանձնահատկությունները, և, ինչու ոչ՝ առկա ողջ քաղաքական խոսությոթը: Հետևաբար, «**Newspeak**» բառը ցույց է տալիս է ոչ միայն նորխոսքը՝ որպես լեզվահամակարգ, այլև դրա կիրառության միջոցով ստեղծված մտաշահարկային խոսությոթը, մարդկանց հասարակական վարքը, աղավաղված մտածելակերպը և այլն:

Թարգմանչի կողմից թիրախ լեզվում ստեղծված համարժեքն է «**Նորալեզու**» բառը, որը բաղկացած է «**նոր**» և «**լեզու**» արմատներից: Այս դեպքում, ինչպես երևում է, բնագրային բառի «**speak**» բաղադրիչը թարգմանվել է «**լեզու**», ինչի արդյունքում էլ «**Նորալեզու**» բառը առավելապես հղում է անում նորխոսքին՝ որպես լեզվական կողի՝ ձևավորված որոշակի օրինաչափությունների հիման վրա, և ցույց չի տալիս դրա ո՛չ կիրառությունը խոսքում, ո՛չ խոսությոթաստեղծ յուրահատկությունները: Ի դեպ, վեպի հայերեն թարգմանվածքը միակը չէ, որում «**speak**» բառը թարգմանվել է որպես «**լեզու**»: «**Speak**» բառը նմանատիպ թարգմանության է արժանացել նաև վեպի ռուսերեն (**Новояз**), իսպաներեն՝ (**Neolingua**), ինչպես նաև գերմաներեն առաջին՝ Կուրտ Վազենզայի 1950 թ. -ի թարգմանվածքում (**Neusprache** (Sprache- լեզու)):

Մենք առաջարկում ենք «**լեզու**» միավորի փոխարեն կիրառել «**խոսք**» բառը, որն համարժեքորեն կարտահայտի բնագրային «**speak**» բառի իմաստը: Կարևոր ենք համարում նշել, որ «**speak**» բառը որպես «**խոսք**» թարգմանելու մեր առաջարկը բնավ էլ առաջինը չէ, և որ այն այս կերպ է թարգմանվել, օրինակ՝ վեպի՝ Մայքլ Ուոլթերի՝ 1980-ականներին կատարած գերմաներեն թարգմանվածքում (*Neusprech*, որտեղ *sprech* բառը ստացվել է *sprechen* (*խոսել*) բայի *-en* բայական վերջավորության սղման արդյունքում), ինչպես նաև վեպի եբրայերեն թարգմանություններում (**סֵפֶר (սփափ)** - *խոսույթ կամ երկխոսություն*):

Առաջարկում ենք նաև «**նոր**» և «**խոսք**» բառերը իրար միացնել առանց **ա** հոդակապի՝ որպես «**Newspeak**» բառի համարժեք թարգմանություն առաջադրելով «**Նորխոսք**» բառը: Այս դեպքում տեղի է ունենում հայերենի բառակազմական նորմի գիտակցական խախտում՝ բառաբարդման առավել տարածված, հոդակապով կաղապարի փոխարեն անհոդակապ և ընդամենը երկվանկ բարդ բառի ստեղծում: Սրանցից թե՛ մեկը՝ որպես լեզվական կանոնի խախտում, և թե՛ մյուսը՝ որպես հնարավորինս կարճ և քիչ թվով վանկեր ունեցող բառ, հատկապես համապատասխանում են նորխոսքի պարզունակ լեզվաբանական կառույցի սկզբունքներին:

Անհամարժեքության նմանատիպ դեպք է նաև «**Doublethink**» բառի թարգմանությունը:

*«His mind hovered for a moment round the doubtful date on the page, and then fetched up with a bump against the Newspeak word **Doublethink**.»* (Orwell 2012: 10)

*«Մի փոքր մի պահ պարզվեց թղթին տրված կասկածելի տարեթվի շուրջ հանկարծ սայթաքեց նորալեզվի **կրկնամիտք** բառի վրա:»* (Օրուել 2012: 9)

«**Doublethink**» բառը, որը վեպում հանդիպում է 31 անգամ, վեպի հակաամբողջատիրական ուղերձի առանցքային բաղադրիչներից է: Ինչպես արդեն նշել ենք սույն աշխատանքի առաջին գլխում, երկմիտքը միաժամանակ երկու հակադիր գաղափարներին հավատալու և դրանք հավասարապես ընդունելու մտավոր կարողությունն էր, որն էլ բռնատիրական կառավարության կողմից օգտագործվում էր որպես գործիք՝ բնակչությանը մտաշահարկման ենթարկելու և կառավարելու վերջիններիս հասարակական վարքը:

«**Doublethink**» բարդ բառը, որը կազմված է «**double**» և «**think**» բառերից, վերոնշյալ իմաստն արտահայտում է իր բաղադրիչների իմաստային պատճառաբանվածության միջոցով: «**Think**» բայ-գոյականը ցույց է տալիս մարդկանց մտածողությունը, իսկ «**Double**»-ը՝ դրա երկակի բնույթը:

Թարգմանության գործընթացում բառը ենթարկվել է պատճենման, որի արդյունքում ստացված «**կրկնամիտք**» համարժեքը ավելի շուտ արտահայտում է կրկնություն, քան կրկնակիություն այն պատճառով, որ «**կրկնակի**» բառը երկակիություն արտահայտում է իր բաղադրիչների՝

«կրկին» արմատի և «-ակի» վերջածանցի համադրության միջոցով: Այս դեպքում, սակայն, «-ակի» վերջածանցը դուրս է թողնվել, որի արդյունքում պահպանված «կրկին» բառը արտահայտում է մտքի կրկնություն, այլ ոչ երբեք կրկնակիություն: Հետևաբար առաջարկում ենք «**Doublethink**» բառի թարգմանության «**երկմիտք**» տարբերակը, որում «**կրկնակի**» բառը փոխարինել ենք «**երկակի**» բառով: Այս դեպքում «-ակի» վերջածանցի սղումը չի հանգեցնի իմաստի շեղման կամ կորստի, և կիրառված «**երկ**» ձևույթը համարժեքորեն կարտահայտի բնագրային բաղադրիչի արտահայտած՝ երկու մտքերի գուգահեռ գոյակցումը:

Նորխոսքի բառային միավորների պատճենման միջոցով ի կատար անված թարգմանությունների վերլուծությամբ կարելի է երևան հանել նաև իմաստային անհամարժեքությունների այնպիսի դեպքեր, որոնցում բնագրի բառերի արտահայտած իմաստները, ըստ էության, պահպանվել են աննշան շեղումներով, և լեզվական արտահայտության որոշակի ձևափոխության արդյունքում կարելի է ապահովել նաև համարժեք թարգմանություններ, որոնք, իհարկե, իմաստի լիարժեք պահպանմամբ, սակայն և իրենց է՛լ ավելի ձևափոխված լեզվական արտահայտությամբ ավելի կհամապատասխանեն նորխոսքի՝ միտումնավոր պարզունակ, մտաշահարկային լեզվական առանձնահատկություններին:

Այսպիսով, օրինակ՝ **unperson** բառը, և վերջինիս հոգնակի՝ **unpersons** տարբերակը համապատասխանաբար թարգմանվել են որպես «**չմարդ**» և «**չմարդիկ**»՝ ցույց տալով անձի այլևս գոյություն չունենալը, վերացած լինելը:

Անձի վերացման հետ մեկտեղ վերացվում էր նաև նրա և նրա հասարակական կյանքի ու գործունեության հետ կապված ցանկացած գրավոր արձանագրություն: Այս դեպքում հեղինակի կողմից հենց **person** բառի կիրառության նպատակն է ի ցույց դնել ոչ միայն մարդուն՝ որպես կենդանի արարածի, այլ նաև որպես անձի և անհատականության, որն էլ, ունենալով սեփական անուն, բնավորություն, մտածելակերպ, ապրելակերպ և այլն, միջանձնային հարաբերությունների մեջ է մտնում այլ անձանց հետ և նրանց կողմից ճանաչվում է որպես անձ: Կարծում ենք, որ վերոնշյալ բառերի «**չմարդ**» և «**չմարդիկ**» թարգմանությունները չեն արտահայտում այս իմաստը: Հետևաբար առաջարկում ենք թարգմանությունների «**չանձ**» և «**չանձեր**» տարբերակները, որոնք համարժեքորեն պահպանում են բնագրի բառերի «**անձնավորություն**» ցույց տվող իմաստը: «**Չանձեր**» բառն էլ, ստացված լինելով հայոց լեզվի **անձինք** բառի ձևային այլափոխման արդյունքում, ավելի է համապատասխանում նորխոսքի աղճատված լեզվական սկզբունքներին՝ զերծ մնալով ընդհանուր կանոնից շեղում կամ բացառություն հադիսացող ձևերից և որդեգրելով ընդհանրապես հոգնակի կազմության կանոնին հետևելու ուղին:

Նորխոսքի բառերի մի հոծ զանգված (շուրջ 25%-ը) թիրախ լեզու է փոխադրվել բառացի թարգմանության ուղով: Ինչպես երևում է ստորև բերված օրինակներում ընդգծված միավորներից, ի տարբերություն բնագրի բառերի, որոնք նորխոսքի լեզվական առանձնահատկությունների հիման վրա

ստեղծված կառույցներ են, հայերեն թարգմանությունները նորահնար կառույցներ չեն և առավել ևս արտահայտված չեն նորխոսքով, օրինակ՝

**fullwise-լրիվ
antefiling-մինչ
ներկայացումը
malreported- կեղծված
malquoted-սխալ
մեջբերում**

**dayorder- օրվա պատվեր
refs- մեջբերումներ
fullwise- ամբողջը
unproceed- չշարունակել
constructionwise-
կառուցողական**

Շրջանցելով բնագրային նորխոսքին հատուկ տարահնչունությունը, ինչպես նաև քերականական և բառակազմական յուրահատկությունները (որոնք էլ տարբերակում են վերջինս անգլերենից և ունեն հստակ մտաշահարկային նշանակություն)՝ մտաշահարկային լեզվական կառույցների հայերեն թարգմանությունները արտահայտված են հայերենում արդեն իսկ գոյություն ունեցող բառերով և չեն իրականացնում նորխոսքին հատուկ մտաշահարկային գործառույթը, այն է՝ մտքի և մտածողության կառավարումը լեզվի պարզունակ և սահմանափակ կառուցվածքի ու հնարավորությունների միջոցով: Եվ եթե անգամ թարգմանված միավորները նույնությամբ արտահայտեն բնագրի բառերի իմաստները, միայն այն պատճառով, որ դրանք իրենց լեզվական արտահայտման կառուցվածքով չեն համապատասխանում նորխոսքի լեզվագործաբանական-մտաշահարկային սկզբունքներին, հայ ընթերցողի կողմից ճանաչելի չեն որպես արիեստաձին նորխոսքի միավորներ, կարող են համարվել անհամարժեք թարգմանություններ:

Բավականին հետաքրքրական է նաև **փոխառության** թարգմանական մեթոդի կիրառությունը նորխոսքի բառային միավորների թարգմանության գործում:

Պայմանավորված լինելով քաղաքական-մշակութային բարենպաստ հանգամանքներով՝ միջազգայնորեն հանրահայտ **Gestapo, Comintern, Inprecor** և **Agitrop** բառերը անմիջապես փոխառվել են թիրախ լեզու՝ ապահովելով համապատասխանաբար **Գեստապո, Կոմինտերն, Ինպրեկոր և Ագիտպրոպ** թիրախ լեզվի համարժեքները:

Փոխառության կիրառության արդյունքում թարգմանական անհամարժեքության բավականին տարօրինակ դեպքեր են, սակայն, **speedful** ածականի և **speedwise** և **goodwise** մակբայների ուղղակի փոխառությունը թիրախ լեզու: Ի դեպ՝ բառային միավորին զուգահեռ թիրախ լեզու է փոխադրվել նաև ածականների և մակբայների ստեղծման բառակազմական սկզբունքը.

«Adjectives were formed by adding the suffix –ful to the noun-verb, and adverbs by adding –wise. Thus, for example, speedful meant ‘rapid’ and speedwise meant ‘quickly’:» (Orwell 2012: 345)

«Ածականները կազմվում էին՝ գոյական-բային ավելացնելով –ֆուլ վերջածանցը, իսկ մակբայներին՝ -ուայզ վերջածանցը: Այսպիսով, օրինակ «սփիդֆուլ» նշանակում էր «արագ», իսկ «սփիդուայզ»՝ «արագորեն»:» (Օրուել 2012: 320)

*«The word **well**, for example, was replaced by **goodwise**.»* (Orwell 2012: 345)

*«Օրինակ «**ուելլ**» բառը փոխարինվել էր «**գուդուայզ**» բառով:»* (Օրուել 2012: 320)

Ինչպես երևում է, թիրախ լեզու են փոխառվել ոչ միայն ածականակերտ և մակբայակերտ ածանցները, այլև վերոնշյալ բառերի **speed** և **good**

բառարմատները, որոնցից ոչ մեկը որևէ իմաստային արժեք չունի թիրախ լեզվում: Այս պարագայում լեզվագործաբանորեն համարժեք թարգմանություններ կարելի է ստանալ բնագրի համանմանությամբ թիրախ լեզվում ածականների և մակբայների կազմության համար համապատասխանաբար մեկ վերջածանց սահմանելով. ածականների համար, օրինակ, կարելի է առանձնացնել **-որեն** (*ինչպես, օրինակ, «բարեմտորեն» բառի դեպքում*), իսկ մակբայների համար **-աբար** վերջածանցը (օր.՝ **լավաբար, արագաբար** և այլն):

Նորխոսքի **bellyfeel** բառն էլ թիրախ լեզվում թարգմանվել է «**ստամոքսել**», ինչն էլ, ըստ էության, **հարմարեցման** միջլեզվական փոխադրման դեպք է:

*«And in addition, only a person thoroughly crouded in Ingsoc could appreciate the full force of the word **bellyfeel**, which implied a blind, enthusiastic acceptance difficult to imagine today...»* (Orwell 2012: 348)

*«Բացի այդ, միայն Անգլոնգի պայմաններում մեծացած մարդը կարող է գնահատել «**ստամոքսել**» բառի ողջ ուժը, որը ենթադրում է կոյր և խանդավառ ընդունում, ինչը դժվար է պատկերացնել մեր օրերում...»* (Օրուել 2012: 323)

Այս դեպքում թարգմանիչը, ինչպես երևում է, դիմել է հարմարեցման՝ թիրախ տեքստում հնարավորինս համարժեքորեն արտահայտելու «**bellyfeel**» բառի արտահայտած իմաստը: «**Bellyfeel**» բառն ուներ շատ կարևոր մտաշահարկային նշանակություն, այն է՝ Անգլիական սոցիալիզմի գաղափարախոսության կոյր, անվերապահ և չլիճարկված ընդունումը: Այս բառը նկարագրում է նաև ներքին հուզական այն խորը փորձառությունը, որը մարդ վերապրում է որևէ երևույթի կամ գաղափարի անմնացորդ որդեգրման արդյունքում:

Թարգմանիչն այս դեպքում հարմարեցրել է բնագրային **bellyfeel** բառը՝ թարգմանելով այն «**ստամոքսել**», որը, սակայն, այնքան էլ համարժեքորեն չի արտահայտում բնագրի բառի կողմից ցուցվող զգացական վերապրումը: **Bellyfeel** բառը այդ իմաստն ի ցույց է դնում իր անմիջական բաղադրիչների իմաստային պատճառաբանվածության շնորհիվ՝ ցույց տալով **զգացողություն** (*feeling*), որն զգում ես **ներսովդ** (*belly*): «Ստամոքսել» բառը, որը հայոց լեզվում ամրագրված բառ չէ, մասնակիորեն ցուցում է «սնունդն ուտելու, խժռելու, և մարսելու երևույթները, և ոչ այն մտավոր, հոգեբանական և զգացական իմաստը, որը նախատեսված էր հեղինակի կողմից: Հետևաբար, որպես բառի համարժեք թարգմանություն առաջարկում ենք **ներսզգալ** բառը, որը ներակա կերպով համարժեքորեն արտահայտում է բնագրի բառի ցուցած «ողջ ներսով զգալու և վերապրելու» երևույթը:

Նորխոսքի բառային միավորների թարգմանության քննության ընթացքում արված միջլեզվական փոխադրման վերլուծությունը և դասակարգումը հնարավորություն ընձեռեցին ոչ միայն դուրս բերել իմաստային անհամարժեքությունները և գնահատել դրանք, այլև վեր հանել թարգմանության արդյունքում լեզվական արտահայտության մեծաքանակ

անհետևողականություններ, որոնք ուղղակիորեն դեմ են նորխոսքի լեզվագործաբանական առանձնահատկություններին:

Նկատելի անհետևողականություններ են թույլ տրվել մի շարք ածականներ և մակբայներ թարգմանելիս: Այսպես՝ բնագրի **սփիղֆույ** ածականն ու **սփիղուայգ** և **գուղուայգ** մակբայները, որոնք ստացվել էին փոխառության միջոցով, իրենց լեզվական արտահայտությամբ ի ցույց են դնում նկատելի անհետևողականություն վեպում տեղ գտած այլ ածականների և մակբայների հետ, որոնք ստացվել են պատճենման և բառացի թարգմանության միջոցով: Բառացի թարգմանության միջոցով ստացված միավորները նորխոսքի կառույցներ չեն, այլ հայերենում ամրագրված բառային միավորներ, օր.՝ **fullwise-լիվ, fullwise-ամբողջ, goodthinkful-բարեմիլ:**

Նույն կերպ և **Constructionwise** և **Goodthinkwise** մակբայները, որոնք պատճենման միջոցով թարգմանվել էին համապատասխանաբար **կառուցողական** և **բարեմտորեն**, վերը քննարկված «**սփիղուայգ**» և «**գուղուայգ**» մակբայների հետ ի ցույց են դնում բառակազմական սկզբունքի նկատելի անհետևողականություն, որտեղ բնագրի նույն մակբայակերտ «**-wise**» վերջածանցի համար հայերենում կիրառվել են «**-ուայգ**» «**-որեն**» և «**-ական**» տարբերակները:

Անհամարժեքության նկատելի դեպքեր են առանձնացվել նաև վեպում տեղ գտած հանրալեզվական կառույցների թարգմանության գործում: Իր դիստոպիկ հասարակական-քաղաքական սյուժեի միջոցով Օրուելի «1984» վեպը բավականին պատկերավոր կերպով արտահայտում է համատարած մտաշահարկման և բռնատիրության արդյունքում ձևավորված հասարակությունն ու վերջինիս խիստ բևեռացված շերտավորումը: Մտաշահարկված այդ հասարակության յուրաքանչյուր շերտի հեղինակը վերագրել է յուրահատուկ լեզվական արտահայտություն: Գոյություն ունեցող նկատելի լեզվական տարբերությունները նույնպես բավականին վարպետորեն են ներկայացված:

Վեպում գրական լեզվով է արտահայտված իշխող կուսակցության ներքին և արտաքին շերտերին պատկանող անդամների խոսքը, որոնք համապատասխանաբար ներկայացնում են հասարակության վերին և միջին խավերը: Լեզվի խոսակցական տարբերակն էլ օգտագործում է հասարակ ժողովուրդը՝ «պրոլետերը», որոնք կազմում են հասարակության ցածր խավը:

Լեզվահասարակական սահմանազատումը լավագույնս արտահայտված է բնագրի տարբեր կերպարների ասոյթներում, որոնցում տեղ գտած հատընտիր լեզվական միավորների ու կառույցների շնորհիվ կարելի է հստակ պատկերացում կազմել խոսողի հասարակական պատկանելության և կարգավիճակի, ինչպես նաև նրան շրջապատող իրականության հետ կապված ամենատարբեր առանձնահատկությունների մասին:

Ձ. Օրուելի «1984» վեպում տեղ գտած հակամարտոցատիրական և հակամտաշահարկային նշանակություն ունեցող հանրալեզվական կառույցների թարգմանության համարժեքությունը գնահատելու նպատակով առանձնացրել ենք երկխոսությունների մի քանի թարգմանություն, որոնց վերլուծության միջոցով փորձել ենք վեր հանել առկա թարգմանական անհամարժեքությունները՝ ուշադրություն դարձնելով, իհարկե, տարբեր

հասարակական առանձնահատկությունների, մասնավորապես՝ դասի և տարիքային խմբի պատկանելության լեզվական արտահայտության յուրահատկություններին և թարգմանվածքում դրանց պահպանմանը: Այսպես՝ օրինակ.

«*We didn't ought to 'ave trusted 'em. I said so, Ma, didn't I? That's what come of trusting 'em. I said so all along. We didn't ought to 'ave trusted the buggers.*» (Orwell 2012: 39)

«- *Ոչ մի դեպքում չպիտի վստահեինք նրանց: Ասում էի, չէ՞, այ կնիկ, ասում էի: Ահա նրանց վստահելու հեղուկները: Միշտ ասում էի: Ոչ մի դեպքում չպիտի վստահեինք այդ փականքներին:*» (Orwell 2012: 36)

Վերոնշյալ ասույթի հեղինակը ծեր պրոլ է՝ հարբած, դժբախտ, հավանաբար նաև անտուն, աշխատավոր դասին պատկանող մի մարդ, որը Լոնդոնի մետրոյի սպալաստ հատակին մի ծեր կնոջ կողքին նստած՝ պատմում է տանջող ծանր և անտանելի ցավը:

Բնագրում ասույթի արտահայտման լեզուն խիստ խոսակցական է՝ գրական լեզվից նկատելի քերականական շեղումներով և կրճատ արտասանություններով, որոնք հանդիպում են նմանատիպ այլ ասույթներում ևս: «*Didn't ought to*» and «*that's what come*» քերականական կառույցները, ինչպես նաև «*'ave*» and «*'em*» կրճատումները վկայում են խոսողի անկիրթ լինելու և հասարակության ցածր խավին պատկանելու մասին:

Ասույթի հայերեն թարգմանությունը, սակայն, արտահայտված է գրական լեզվով: Այս դեպքում թարգմանիչը գրեթե ընդհանրապես չի պահպանել աղբյուր տեքստի հանրալեզվական յուրահատկությունները: «*Կնիկ*» բառն, ըստ էության, միակ խոսակցական բառն է, որը կիրառվել է ասույթի թարգմանության մեջ: Մենք առաջարկում ենք ասույթի թարգմանության մեջ տեղ գտած մի քանի՝ գրական լեզվին հատուկ արտահայտությունների խոսակցական տարբերակների կիրառությամբ ապահովել դրա հանրալեզվականորեն համարժեք թարգմանություն: Մասնավորապես՝ «*Ոչ մի դեպքում*» արտահայտությունը, որը գրական լեզվին հատուկ կառույց է և ցածր խավի, կրթական ցածր ցենզ ունեցող ներկայացուցչին հատուկ չէ, կարող է զեղչվել: «*Ought to 'ave*» կառույցը «*չպիտի-ի*» փոխարեն կարելի է թարգմանել «*չպիտի*», «*them*» դերանվան բառացի «*նրանց*» թարգմանությունը կարելի է փոխարինել «*դրանց*» դերանունով: «*Ահա նրանց վստահելու հեղուկները*» նախադասությունը նույնպես շատ գրական է հնչում և կարելի է թարգմանել «*Էս էլ քեզ դրանց վստահելու խերը*»: Նույն սկզբունքով «*I said so all along*» նախադասության «*Միշտ էլ ասում էի*» թարգմանության մեջ «*միշտ էլ*» արտահայտությունը կարելի է փոխարինել «*հա էլ*» արտահայտությամբ, իսկ վերջին նախադասության «*ոչ մի դեպքում*» արտահայտությունը կրկին բաց թողնել, իսկ «*այդ*» ցուցական դերանունը փոխարինել խոսակցական «*էդ*» տարբերակով: Որպես ողջ ասույթի համարժեք թարգմանություն առաջարկում ենք հետևյալ տարբերակը. «-*Չպիտի վստահեինք դրանց: Ասում էի, չէ՞, այ կնիկ, ասում էի: Էս էլ քեզ դրանց վստահելու խերը: Հա էլ ասում էի: Չպիտի վստահեինք էդ փականքներին:*»

Ինչպես նորխոսքը, որի գործառույթն այս «ուղերձում» լեզվական կառույցի միջոցով մտաշահարկված իրականությունը գործաբանորեն արտապատկերելն էր, այնպես էլ հերոսների խոսքն արտահայտող լեզվական կառույցները կիրառված են ներկայացնելու հեղինակի կանխատեսած սև ու մուգ ապագան, դաժան ու դժվար կյանքը, մտաշահարկված և շահագործված հասարակությունը: Իսկ այս դեպքում, նմանատիպ կառույցների իրականացումը կարևոր հաղորդակցական գործառույթը պարտադրում է դրանց համարժեք փոխադրումը թիրախ լեզու համարժեք հանրալեզվաբանական կառույցներով՝ անգամ ենթադրելով գրական լեզվի կամ թարգմանական արդի նորմերի որոշակի խախտում:

Ատենախոսության շրջանականերում կատարված հետազոտությունից հստակ ուրվագծվում են հետևյալ մի քանի օրինաչափությունները:

1. Նորխոսքի բառապաշարային միավորների իմաստային և լեզվագործաբանական անհամարժեքությունից բացի, մի շարք դեպքերում ականատեսն ենք դառնում մտաշահարկային տեքստերում՝ կուսակցության հրահանգներում, ոչ-նորխոսքային, այն է՝ անգլերենի բառապաշարում ամրագրված միավորների անհամարժեք թարգմանության: Այս դեպքերում թարգմանական անհամարժեքությունը հանգեցնում է բնագրում իրացված հեղինակային մտադրության կորստի և թարգմանվածքի ընթերցողի կողմից թյուրըմբռնման:
2. Թարգմանվածքում հեղինակի մտադրության և նորխոսքի մտաշահարկային գործառույթի տեսանկյունից անարժեք է թարգմանչի կողմից բնագիր տեքստի վերջին գլխից նորխոսքի միավորների մեխանիկական և հենց անգլերեն գրությամբ փոխադրումը թարգմանվածք: Այս կերպ, եթե թարգմանվածքի ընթերցողները չեն տիրապետում անգլերենի քերականական կառույցների, և ձևաբանական լուծումների և առանձնահատկությունների մանրամասներին, անկարող կլինեն ընկալել նորխոսքի հիմքում ընկած և Օրուելի կողմից նախագծված, միտումնավոր կերպով կանխորոշված քերականական պարզունակեցման սխեման:
3. Թարգմանության մեջ մի դեպքում միայն իմաստի, իսկ մյուս դեպքում միայն ձևային արտահայտության յուրահատկությունների պահպանումը թիրախ լեզվում ուղղակիորեն կապված է թարգմանչի որդեգրած թարգմանական մոտեցման կամ ռազմավարության հետևողական կամ անհետևողական կիրառման հետ: Թարգմանության ողջ գործընթացի ժամանակագրային-հաջորդական արտապատկերումը պարզ ցույց է տալիս, որ թարգմանական գործունեության ընթացքում համարժեք փոխադրման նախապատվությունը երբեմն տրվել է կամ բառիմաստի, կամ ձևային արտահայտության պահպանմանը: Առաջարկված թարգմանությունները կամ իմաստի, կամ ձևային արտահայտության տեսանկյունից չեն համապատասխանում նորխոսքի լեզվագործաբանական սկզբունքներին: Այնինչ համարժեք թարգմանություն ստանալու գործում թարգմանական ռազմավարության կանոնավոր և հետևողական կիրառումը պարտադիր նախապայման է հատկապես այն պատճառով, որ դրա ընտրությունը նախնառաջ պայմանավորված է աղբյուր տեքստի մի

շարք կարևոր առանձնահատկությունների, օրինակ՝ դրա հաղորդակցական գործառույթի կամ լսարանի կողմից համարժեք ըմբռնիչության ապահովման պահանջով: Եթե տեքստերի մեծ մասի դեպքում նախապատվությունը տրվում է կա՛մ իմաստին, կա՛մ ձևային արտահայտությանը՝ կախված դրա հաղորդակցական գործառույթից, նորխոսքի դեպքում հաղորդակցական նշանակություն ունեն երկու տիրույթներն էլ հավասարապես, որոնցից յուրաքանչյուրի համարժեք պահպանումը թարգմանական ռազմավարության վերջնանպատակն է:

4. Թարգմանական ռազմավարության անհետևողականությամբ են պայմանավորված նաև թիրախ տեքստում տեղ գտած ձևային արտահայտության անհետևողականությունները: Նորխոսքի միավորների հայերեն տարբերակների հոմանշությունն ու համանունությունը հակասում են նորխոսքի պարզ և մտաշահարկային լեզվաբանական սկզբունքներին:
5. Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ նորխոսքի բառային միավորներն իրենց վերագրված մտաշահարկային գործառույթն իրականացնում են ոչ միայն իրենց արտահայտած գործաբանական իմաստների, այլև իրենց լեզվական-ձևային պարզունակ կառուցվածքի շնորհիվ, որոնցից երկուսն էլ պետք է համարժեք փոխադրման ենթարկվեն թարգմանության ընթացքում: Այս պարագայում, ըստ էության, թարգմանության՝ որպես միջլեզվական փոխադրման պետք է արժանանան ոչ միայն բառերի արտահայտած իմաստները, այլև բնագրում դրանց կառուցման սկզբունքները:
6. Վերակառուցողական այս գործընթացը սկզբունքորեն հիշեցնում է թարգմանության գործընթացի Նայդայի և Թաբերի վերը ներկայացված մեխանիզմը: Այս դեպքում մակերեսային մակարդակը բնագրային նորխոսքի բառն է՝ որպես ձևիմաստային ամբողջություն: Թարգմանության գործընթացում նորխոսքի բառը վերլուծելիս դիտարկվում է բառի իմաստի և այն արտահայտող լեզվական կառույցի միջև գոյություն ունեցող ձևիմաստային կապը: Այնուհետև միջլեզվական փոխադրման արդյունքում թիրախ լեզվահամակարգի օրինաչափությունների այլափոխման հիման վրա ձևավորվում է բառակազմական այնպիսի մի կառույց, որը թիրախ լեզվամշակույթում համարժեքորեն կարտահայտի բնագիր բառի արտահայտած իմաստը՝ միաժամանակ իր պարզ լեզվական կառույցով համապատասխանելով նորխոսքի մտաշահարկային սկզբունքներին:
7. Վեպի հաղորդակցական արժեքի անքակտելի մասն են նաև դրանում տեղ գտած հանրալեզվական կառույցները, որոնց հիմնական գործառույթը քաղաքական մտաշահարկման արդյունքում ձևավորված աղքատ և քայքայված հասարակության բուն էությունը նկարագրելն է: Վեպի հայերեն թարգմանվածքում հասարակության ցածր խավի ներկայացուցիչների կողմից կիրառվող առօրյա խոսակցական և փողոցային ժարգոնի լեզվական միջոցները փոխարինվել են խիստ գրական արտահայտման լեզվական կառույցներով, ինչի արդյունքում դրանք չեն իրականացնում բնագրային միավորների հաղորդակցական-տեղեկատվական գործառույթը: Սա էլ

պայմանավորված է թիրախ լեզվամշակույթին հատուկ արդի լեզվական և թարգմանական նորմերով, որոնք, սակայն, կարելի է խախտել տվյալ հանրալեզվական կառույցների հաղորդակցական նշանակության համարժեք պահպանման նպատակով:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. The Pragmatic Characteristics of Orwellian ‘Newspeak’ and Its Armenian Translation // «Գրականության եվ մշակույթի արդի հիմնախնդիրներ», Պրակ Է, «Լինգվա», 2016, էջ 391-399:
2. The Armenian Translation of George Orwell’s “Nineteen Eighty-Four”: Socially Significant Linguistic Forms in Equivalent Translation // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(40), «Լինգվա», 2017, էջ 274-290:
3. Խոսքամասային փոխատեղումներն ու գործաբանական անհամարժեքությունը Զ. Օրուելի «1984» վեպի հայերեն թարգմանվածքում // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(42), «Լինգվա», 2017, էջ 319-328:
4. Translation as an Interdiscipline: The Interdisciplinary Aspects of Descriptive Translation Analysis // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(42), «Լինգվա», 2017, էջ 329-337:
5. Համարժեքությունը որպես հաջող թարգմանության առանցքային առանձնահատկություն // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(44), «Լինգվա», 2018, էջ 349-370
6. Թարգմանության որակի գնահատման մեթոդաբանական հենքը // «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(44), «Լինգվա», 2018, էջ 371-381

ГУРГЕН СПАРТАКОВИЧ КАРАПЕТЯН

**ПРОБЛЕМА СОХРАНЕНИЯ ЛИНГВОПРАГМАТИЧЕСКИХ
ОСОБЕННОСТЕЙ МАНИПУЛЯЦИИ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ
РОМАНА «1984» ДЖ. ОРУЭЛЛА**

**Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 10.02.07 «Романо-
германские языки»**

Защита состоится 30-го мая 2018 г. в 11:00 на заседании
специализированного совета 009 – «Иностранные языки» ВАК РА при
Ереванском государственном университете

РЕЗЮМЕ

Объектом данного исследования является проблема сохранения лингвопрагматических особенностей манипуляции в армянском переводе романа “1984” Дж. Оруэлла.

Благодаря своей ярко выраженной антидеспотичной направленности роман со дня публикации служил манифестом против массовой общественной манипуляции, осуществляемой во многих странах их авторитарными правительствами. Как литературное произведение, книга не только великолепно и наглядно иллюстрирует сложный механизм политической манипуляции и разрозненное общество, появившееся в результате данных действий, но и с лингвистической точностью объясняет все основные дискурсивные процессы, которые лежат в основе данных языковых манипулятивных стратегий. Благодаря этому книга представляет огромную ценность для лингвистических исследований.

Использованные лингвистические инструменты манипуляции, представленные в романе “1984” – “Двоемыслие” и “Новояз”, предполагают исключительно прагматические способы актуализации в политическом дискурсе. Умственное воздействие, производимое с помощью этих лингвистических манипулятивных средств, осуществляется при помощи имплицатуры: подразумеваемое значение, которое выражается при помощи политической иронии, концептуальное созвучие, выраженное посредством компрометации ценностей и использования примитивной структуры языка, которое непосредственно основано на теории лингвистического детерминизма. Выше упомянутые лингво-прагматические особенности являются основной материализации антиманипулятивной идеи романа, что и подчеркивает необходимость их эквивалентной межъязыковой передачи в процессе перевода. Эти особенности, к сожалению, в армянском переводе романа не совсем сохранились.

Учитывая эту проблему, **цель** данного исследования - проанализировать прагматические характеристики лингвистических единиц, используемых в манипулятивном политическом дискурсе, и предложить применимый переводческий подход для их эквивалентного перевода.

Для изучения данной проблемы были выделены следующие конкретные задачи:

1. изучить дискурсивно-манипулятивные характеристики «Двоемыслия» и «Новояза» в романе “1984”,
2. выявить и объяснить их лингвистические особенности,
3. сравнить лингвистические единицы исходного текста и их эквиваленты в армянском переводе,
4. проанализировать уже существующие варианты перевода и предложить наиболее соответствующие варианты к выделенным переводческим неэквивалентностям.

Новизна исследования обусловлена тем, что армянский перевод данного романа, осуществленный в 2012 году, не являлся предметом переводческих исследований.

Теоретическая ценность состоит в многоаспектности предлагаемого методологического подхода к переводческой эквивалентности.

Практическое значение заключается в том, что предложенные варианты единиц “Новояза” могут послужить основой пересмотра и улучшения уже опубликованных переводов данного романа.

GURGEN KARAPETYAN

THE RETENTION OF THE LINGUO-PRAGMATIC ASPECTS OF MANIPULATION IN THE ARMENIAN TRANSLATION OF G. ORWELL'S NINETEEN EIGHTY-FOUR

SUMMARY

The object under the analytical spotlight of this research is the retention of the linguo-pragmatic specificities of political manipulation in the Armenian translation of George Orwell's novel *Nineteen Eighty-Four*.

With its acute anti-totalitarian message, the novel has, since the day of its publication, served as a unique revelation of the massive public manipulation happening in a vast number of societies undertaken by their authoritarian governments. As a literary work, the book not only masterly illustrates the complex mechanism of political manipulation and the deteriorated society emerged through its exercise, but also elucidates with linguistic accuracy the core discursive processes lying under its lingual reification. Due to this very virtue the book is of immense linguistic importance.

The two linguistic tools of political manipulation presented in the novel- "Doublethink" and "Newspeak" suggest exclusively pragmatic ways of actualization in political discourse. The mental impact executed through these linguistic means of manipulation are carried out through implicatures- implied meanings through political irony, conceptual consonance through compromization of values, and most importantly, through primitive language structure, which hinges strongly upon the theory of Linguistic Determinism. These linguo-pragmatic specificities of Doublethink and Newspeak are the descriptive axis of the anti-manipulative message of the novel, necessitating their equivalent interlingual transfer in the process of translation, which have, in actual fact, not been equivalently rendered in the Armenian translation of the novel.

With that problem in mind, the **goal** of this research is to analyze the pragmatic characteristics of the linguistic units used in manipulative political discourse and to suggest an applicable translatorial approach for their equivalent translation. For the investigation of this very problem the following general research objectives were singled out.

1. To study the discursive-manipulative characteristics of "Doublethink" and "Newspeak" in *Nineteen Eighty-Four*,
2. To elucidate their linguistic specificities as expressed in the novel,
3. To analytically compare the source-text linguistic units with their equivalents in the Armenian translation,
4. To assess the translations and suggest more equivalent options for detected inequivalences.

The **novelty** of the reserach is conditioned by the subject material under study. G. Orwell's novel targets the ever-actual malady of political manipulation, the study of which is at all times practical and necessary. In addition to this, the Armenian translation of the novel was published quite recently- in the year of 2012, not having been subject to any kind of linguistic research yet.

The **theoretical value** of this study is greatly provided by its methodological analysis, which comes to enrich the existing research on translation and translation theory available in the Armenian language.

The **practical significance** of this reserach is supported by the potential applicability of its content, which can be used by the publisher to deliver newer and improved translations of the novel.

